ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔ

ՀԱՅԿԱԿԱՆ «ՀՈՎԵՐԻ» ԵՎ «ՎՐԱՑԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԵՏԱՅԻ» ՀԱՄԱՏԵՂ ՀԱՄԵՐԳԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունների նախաձեռնությամբ եւ Վրաստանում Հայաստանի դեսպանության աջակցությամբ դեկտեմբերի 9-ին, Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի փոքր դահլիճում, տեղի ունեցավ Երեւանի «Հովեր» երգչախմբի եւ Թբիլիսիի «Սիմֆոնետա» կամերային նվագախմբի համատեղ համերգը՝ նվիրված Վրաստանի եւ Հայաստանի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյա հոբելյանին:

Համերգին բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Աշոտ Սմբատյանը, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Արա Խզմալյանը եւ Վրաստանի մշակույթի, սպորտի եւ երիտասարդության փոխնախարար Իրակլի Գիվիաշվիլին:

Համերգի ծրագիրը ներառում էր Ռամոյի, Պյորսելլի, Մարեի, Մոնտեվերդիի, Լասոյի, Գաբրիելի եւ Գիբոնսի երաժշտությունը՝ պսակվելով Վիվալդիի «Magnificat» ստեղծագործությամբ՝ «Վրացական Սինֆոնետայի» եւ «Հովեր» երգչախմբի համատեղ կատարմամբ, մենակատարներն էին Ամալյա Թորոսյան (սոպրանո), Նվարդ Հովակիմյան (ալտ), Արամո Մամիկոնյան (տենոր), Աշոտ Ղանթարջյան (բաս), դիրիժոր՝ Նարինե Ոսկանյան:

Նշենք, որ համատեղ համերգով այս ստեղծագործական խմբերը դեկտեմբերի 4-ին հանդես էին եկել Երեւանում:

«ԱՊԱԳԱ ՀԱՅԿԱԿԱՆԸ» ՀԱՆՐԱՅԻՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԹԲԻԼԻՍԱՀԱՅԵՐԻՆ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնի Գալուստ Գյուլբենկյան սրահում, դեկտեմբերի 4-ին, կայացավ հանդիպում՝ Երեւանից ժամանած «Ապագա հայկականը» զարգացման հիմնադրամի ղեկավարներ Արամ Բեկչյանի, Արտակ Կապիտոնյանի եւ թբիլիսահայերի հետ:

Հանդիպումը, որն իրականացավ հիմնադրամի նախաձեռնությամբ, նպատակաուղղված էր թբիլիսահայ համայնքին մանրամասն տեղեկատվություն հաղորդել «Ապագա հայկականը» հանրային նախաձեռնության մասին, ինչպես նաեւ իրազեկել 2023 թվականի մարտ ամսին Երեւանում կայանալիք հիմնադրամի կողմից կազմակերպված առաջին համաժողովին մասնակցության մասին:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«ՁԵՌՔԵՐ-ԳԵՏԵՐ» ՎԵՊԸ ԱՆՁՅԱԼԻՑ՝ ԱՊԱԳԱՅԻ ՈՒՊԵՐՁ



Վիրահայոց թեմի Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում կայացավ թբիլիսահայ ռուսալեզու ստեղծագործող Լիանա Շահվերդյանի «Ձեռքեր-գետեր» վեպի եւ «Արեւի երազները» ժողովածուի շնորհանդեսը:

Ծնունդով թբիլիսցի, Թբիլիսիի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի շրջանավարտ Լիանա Շահվերդյանը ժամանակին դասավանդել է Թբիլիսիում եւ Մոսկվայում, ներկայումս ապրում է Երեւանում:

«Ձեռքեր-գետեր» վեպը հեղինակի լավագույն ստեղծագործություններից մեկն է, այն ընթերցողին պատկերում է ոչ միայն մեկ ընտանիքի պատմությունը, այլեւ նախորդ դարի սկզբներին ծավալվող իրադարձությունները, Հայաստանի ձեւավորման բարդ գործընթացը: Գրքում հեղինակը բավական հստակեցված ձեւաչափով պատմում է Դանուշ Շահվերդյան քաղաքագետի, մշակութային գործչի եւ ընտանիքի ողբերգական ճակատագրի մասին, մարդու, ով աշխատանքի առումով շփում է ունեցել պատմական իրական անձանց՝ Գիորգի Գուրջիեւի, Իոսեբ Ստալինի, Անաստաս Միկոյանի եւ ուրիշների հետ:

«Արեւի երազներ» ժողովածուն հեղինակի չորրորդ գիրքն է, հեղինակն այն ձեւավորել է «Ձեռքեր-գետեր» վեպի հետ զուգընթաց: Ժողովածուում տեղ են գտել հեղինակի հոգեկան ապրումների պատկերները: Հեղինակի կողմից պատահականորեն չի ընտրված նաեւ վերնագիրը, քանզի արեւի հետ է առնչվում ոչ միայն լուսային էներգիան, այլեւ զգայական եւ ստվերային կողմերը: Չէ՞ որ արեւն է իր ճառագայթներով հագեցնում կյանքը, հավերժական առաջընթացը...

ԵԿԱՏԵՐԻՆԱ ՄԻՆԱՍՅԱՆ

«ԱԼԻՔ ՄԵԴԻԱ»-Ի ԿԱՅՔԻՑ

ԱՐՍԵՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ. «ԾՈՓ ԳՅՈՒՂԸ ԿՈՒՆԵՆԱ ԺԱՄԱՆՑԻ ՍՐԱՀ»

Մառնեուլիի մունիցիպալիտետի հայերով ու ադրբեջանցիներով բնակեցված Ծոփ գյուղը 2 տարվա ընթացքում ժամանցի սրահ կունենա. «Ալիք Մեդիայի» ֆեյսբուքյան ուղիղ եթերում հայտարարել է Մառնեուլիի սակրեբուլոյի պատգամավոր Արսեն Հախվերդյանը:

Ըստ սակրեբուլոյի պատգամավորի՝ գյուղում առկա է Խորհրդային Միությունից մնացած ակումբ, որը շատ լավ է պահպանվել. նախատեսվում է այդ շենքը վերանորոգել եւ ծառայեցնել նշված նպատակին:

Խոսելով Ծոփ գյուղի հասարակական տրանսպորտի խնդրի մասին, Հախվերդյանը նկատում է, որ գյուղն ունի հասարակական տրանսպորտ, սակայն՝ մասնավոր:

- Հունվարից մենք կունենանք Խոժոռնի գյուղից մեկնարկող հասարակական տրանսպորտ, որը, մինչեւ Մառնեուլի հասնելը, կանցնի Գյուլիբաղ, Ծոփ, Մոլաօղլի եւ այլ գյուղերով ու կսպասարկի նաեւ այդ գյուղերի բնակիչներին, - ասել է Հախվերդյանը:

«Ալիք Մեդիա» Վրաստանը, «Ինտերնյուս Վրաստան» հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում, «Իմ համայնքի ձայնը» խորագրով նախագծի հիման վրա, ֆեյսբուքյան ուղիղ եթերում, ամփոփել է Քվեմո Քարթլիի շրջանի բնակչության հարցերը՝ ուղղված տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՆՈՐԱՅՐ ՄԻՍԿԱՐՅԱՆ



ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❁ ԱՅԼԱՔԱՆ ❁ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՋԻՆ ՏԱՐԻՔԻ ՃԳՆԱԺԱՄ. ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ԱՅՆ



Երեսունինը տարեկան եմ, ամուսինս՝ 40: Տասնհինգ տարի է, ինչ ամուսնացած եմ, ունենք երեխաներ: Վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել ենք հաճախ վիճել, իսկ վերջերս ամուսինս հայտարարեց, որ յանկանում է բնակարան վարձել եւ մենակ ապրել: Խոստացավ հաճախ այցելել մեզ: Չգիտեմ, ինչո՞վ բացատրել՝ միջին տարիքի ճգնաժամո՞վ:

Ա.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Թբիլիսի

Հարգելի տիկին Ա.Կիրակոսյան, ձեր նամակի պատասխանը փորձեցինք ձեւակերպել՝ դիմելով ճանաչված հոգեբան Արամ Մանուկյանին: Ստորեւ ներկայացնում ենք նրա մեկնաբանությունը.

- Ձեր ամուսինը ներկայումս գտնվում է բարդ ժամանակահատվածում, եւ դուք չեք սխալվում այդ շրջանը որակելով որպես միջին տարիքի ճգնաժամային պայմաններում՝ արժեքների վերագնահատում, նոր հետաքրքրությունների եւ ցանկությունների ծագում: Նման փոփոխության պայմաններում դուք եւ ձեր ընտանիքը, ընդհանուր առմամբ, արդեն չեք «բավարարում» ձեր ամուսնուն: Ինքն այդ մասին երբեք չի ասի, թեեւ դա ակնհայտ է նրա վարքագծում: Նման տղամարդկանց վերաբերյալ հաճախ են ասում՝ «ինչ-որ նոր բան է փնտրում»:

Բնական է, ձեզ հետաքրքրում է այն հարցը, թե, արդյոք, ձեր ամուսնու կյանքում չի՞ հայտնվել որեւէ կին, եւ արդյոք, դա չէ՞ վերջին ժամանակներում ձեր ամուսնու բնավորության փոփոխության պատճառը: Հավատացե՛ք, նրա կյանքում նոր կին չի հայտնվել, թեպետ մի՞գուցե առանձին գայթակղություններ ունեցել է: Մի խոսքով՝ նա ցանկություն ունի ընկալել նորը, եւ դա միանշանակ այդքան էլ բարի նշան չէ: Եթե նրա տեսադաշտում հայտնվի հետաքրքիր կին, ով կհետաքրքրվի նրանով, ապա բացառված չէ, որ նա օգտվի ընձեռված առիթից:

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

ԻՆՉՈ՞Ւ ՉՈՒՆԵՄ ԻՆՔՆԱՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՄՔԻ ՈՒԺ



Արդեն մի քանի տարի է, ինչ զբաղվում եմ բացարձակապես ինձ չհետաքրքրող աշխատանքով: Պատճառը՝ աշխատավարձն է, ինչ համար երեւակայություններին տարվելու ժամանակ չի մնում, սակայն ինքնակատարելագործման, ինքնազարգացման ցանկությունս մեծ է:

Տ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Բաթումի

Ամենայն հավանականությամբ, ձեր ներքին էներգիան նման պայմաններում զրոյական է, այն բավական է միայն առօրյա կարիքների կարգավորման համար: Դուք աշխատում եք, որպեսզի ստանաք աշխատավարձ, ստանալով փողը՝ այն ծախսում եք: **Թբիլիսցի հոգեբան Արամ Մանուկյանի** խոսքով՝ դուք պետք է որոշակիորեն փոխեք ձեր կյանքի դրվածքը, այն սկսեք սովորական հարցով՝ «որտե՞ղ կարող եմ ստանալ լրացուցիչ էներգիա»: Գործեք աստիճանաբար: Օրվա ընթացքում առանձնացրեք կես ժամ ձեր հետաքրքրությունների համար, հանգստյան օրերը ծրագրեք այնպես, որպեսզի ժամանակ ունենաք ոչ միայն առօրյա գործերի, այլեւ ժամանցի համար: Աշխատավարձից որոշակի գումար առանձնացրեք այդ ժամանցի ֆինանսավորման համար: Այդպիսով, դուք կկարողանաք ապահովել համապատասխան տրամադրվածություն:

Բնականաբար, կան նաեւ այլ ուղիներ: Մասնավորապես, նոր մասնագիտության յուրացման դասընթացները, հոգեբանության ոլորտում ինքնակատարելագործման մեթոդների օգտագործումը: Այդ ամենը կնպաստի ձեր ներքին տրամադրության փոփոխմանը, ինչն իր հերթին կդառնա փոփոխությունների նախադրյալ: Բացառված չէ, որ դուք թողնեք ձեզ չհետաքրքրող աշխատանքը եւ գտնեք այն գործը, որը թույլ կտա ստանալ շատ ավելին:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է...

ԵՐԱԶԸ՝ ՍԱՀՄԱՆԱԳԻԾ ԿՅԱՆՔԻ ԵՎ «ՈՉ ԿՅԱՆՔԻ» ՄԻՋԵՎ

(Սկիզբը՝ նախորդ համարում)



Երբ Բոբին արթնացավ, նա արտաքնապես առողջ էր ու հանգստացած: Երազը չէր հիշում, Թիմի անունը նրան ոչինչ չէր ասում: Սակայն ազգականներից մեկը հիշեց, որ հարեւան գյուղում մոտ 20 միլ հեռավորության վրա ապրում է այդ ազգանունը կրող մի կին:

Այդ տարօրինակ երազից հինգ օր անց, տիկին Թիմին ծանուցագիր ստացավ, որ նրա որդին՝ Էդվինը, զոհվել է մարտում: Նա զոհվել էր հաջորդ օրը, երբ Բոբին երազում ասաց այդ մասին: Ինչպե՞ս կարողացավ փոքրիկը երազում խոսել այն մարդկանց մասին, ում կյանքում երբեք չէր հանդիպել եւ տեսնել իրադարձությունը, որը տեղի էր ունենալու հաջորդ օրը, այն էլ՝ հեռավոր երկրում...

ԵՐԱԶԻ ՓՈՒԼԵՐԸ

Առաջինը, ով փորձեց գիտականորեն պատասխանել այն հարցին, թե որքանով են երազները վերածվում իրատեսական իրադարձության, դա Զիգմունդ Ֆրեյդն էր: Նա գտնում էր, որ երազները մասնավոր եւ էրոտիկ պայմանավորված են գաղտնի ցանկություններով եւ ոչ թե կանխագուշակումներով: Ամերիկյան նեյրոֆիզիոլոգ Նաթանիել Քլեյթմանին, ով առաջինն սկսեց գիտականորեն ուսումնասիրել երազները, հաջողվեց բացահայտել արագ քնի մեկ եւ դանդաղ քնի չորս փուլերը: Առաջին փուլը նա անվանեց նիրհում: Այդ ժամանակ կարող են ծագել սովորական զգացումներ ու մտքեր: Երկրորդ փուլը կոչվեց՝ մակերեսային: Այդ փուլում առկա է ուղեղի բացառիկ գործունեությունը: Երրորդ փուլը՝ խոր քունն է, իսկ վերջինը՝ չորրորդը, իրենից ներկայացնում է դելտա-քուն՝ առավել պարզորոշ, պայծառ պատկերներով:

ԵՐԱԶԱՀԱՆ

Առաջին երազահանը, որ արժանի է ուշադրության, մշակվել էր մեր թվարկության երկրորդ դարում՝ պրոֆեսիոնալ կանխագուշակող Արտեմիդոլ Դալդիանու կողմից: Նա երազները բացատրում էր՝ ելնելով մարդու բնավորությունից, արտաքին տեսքից, անունից եւ սոցիալական դիրքից: Այսօր նման հրատարակումներն ավելի շատ են: Արժե՞, արդյոք, դրանց վստահելը: Բնականաբար, դա յուրաքանչյուրի անձնական գործն է: Այս պարագայում հարկ է հիշել Կարլ Յունգի խոսքը այն մասին, որ պատրաստի տեղեկագրերին հավատալը՝ հիմարություն է: Նա համոզված էր, որ երազներում տեսած կերպարները կոնկրետ են, ուստի՝ անբաժան յուրաքանչյուր կոնկրետ անձնավորությունից:

ԻՆՉՊԵ՞Ս ԵՐԱԶԸ ԴԱՐՁՆԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գիտնականներն այդպես էլ չեն կարողանում հասկանալ՝ երազներն իրականանո՞ւմ են, թե՞ ոչ, եթե՝ այո, ապա՝ ինչպե՞ս: Սակայն դա չի նշանակում, որ տվյալ իրողությունն արգելում է երազը դարձնել իրականություն: Երազը, ըստ գիտնականների, ինքնաներթափանցման յուրատեսակ ձեւ է: Երազում շատերը ստանում են մտքի պայծառություն: Ստեղծագործական պայծառությունը, որպես օրենք, ունենում են տաղանդավոր մարդիկ, նման մտքի պայծառություն են ունեցել Ֆլեմինգը, Բոռը, Էյնշտեյնը, Մենդելեեւը, նաեւ՝ Լոմոնոսովը, Դոստոեւսկին... Ուստի, արթնանալուց հետո՝ փորձեք հիշել, թե ի՞նչ եք տեսել երազում: Ոմանք գտնում են, որ նման մտքի պայծառության կարելի է հասնել ինքնուրույն, դրա համար բավական է քնելուց առաջ կատարել սովորական վարժություններ. ենթագիտակցաբար ձեզ հանձնարարեք հիշել երազը:

ՎԱՏ ԵՐԱԶՆԵՐ

Հորվարդի համալսարանի պրոֆեսոր Ալան Խոփսոնը համոզված է, որ իրեն հաջողվել է բացահայտել երազի գաղտնիքը: Նա ենթադրում է, որ երազի գլխավոր խնդիրը՝ առաջիկա իրադարձությունների վերաբերյալ մարդկանց զգուշացումն է, դա գլխավորապես առնչվում է արագ քնելուն: Այն մարդկանց օգնում է նախապատրաստվել կյանքի անխուսափելի դժվարություններին: Նեյրոկենսաբանները, իրենց հերթին, երազն առնչում են գիտակցականության ձեւերից մեկին, ոչ թե ենթագիտակցությանը՝ դրանով իսկ մերժելով երազի բուժական ուժի մասին տեսակետը: Երազը կարող է ձեզ պատմել այն մասին, ինչը մինչ այդ չեք կարողացել բացատրել: Երազի օգնությամբ հնարավոր չէ բուժել հոգեկան ցավը կամ լուծել հակամարտությունը: Վատ երազը ապագայի սցենարն է, որից հնարավոր է եւ պետք է խուսափել: Հետեւաբար, վատ երազները ձեզ զգուշացնում են այն մասին, թե ինչը պետք է չասել:

ԼԱՎ ԵՐԱԶՆԵՐ

Շվեդիայի գիտնականները պնդում են, որ լավ երազները, օրինակ՝ գեղեցիկ մարմնի մասին, կարող են վերածվել իրականության: Բացի այդ, մարդիկ միայն լավ երազներն են համարում կանխագուշակում: Գիտնականները հաշվել են նաեւ, որ լավ երազ տեսնելու ժամանակ կանայք ծախսում են 30 կկալ ավելի, քան սովորական տեւական քնի ժամանակ:

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

☺ *Տղամարդը տուն է գալիս կոնֆետների մի մեծ փաթեթ ձեռքին ու ասում իր չորս փոքրիկներին.*

- Նա, ով միշտ լսում է մայրիկին, ով երբեք չի հակաճառում, ով կատարում է նրա բոլոր խնդրանքները, նրան էլ կհասնեն այս կոնֆետները:

Երեխաները միաձայն գոչում են.

- Քեզ, հայրի՛կ:

☺ *Փոքրիկ աղջիկը թերթում է ընտանեկան ալբոմը.*

- Մայրիկ, ո՞վ է այս երիտասարդ, գեղեցիկ քեռին, որ քեզ հետ նստած է լողափում:

Մայրիկը խոր հոգոց է քաշում ու պատասխանում.

- Այդ լուսանկարն արդեն 20 տարեկան է: Դա քո հայրիկն է:

- Այ քեզ բա՜ն: Այդ դեպքում ո՞վ է այն ճաղատ քեռին, որ մեզ հետ է ապրում...

☺ *- Այս կինը ձեր ազգակա՞նն է:*

- Այո, բայց շատ հեռավոր: Մայրս տասներկու երեխա է ունեցել, ես ամենամեծն եմ, իսկ նա՝ ամենակրտսերը:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Եթե ուզում ես ընկերներիդ ծառայություն մատուցել, ապա պետք չէ լռության մատնել նրանց թերությունները:

ԴԵԲԻԴՈՒՐ

Ինչ-որ ուզում ես, սիրով ավելի արագ կստանաս, քան սուր ճոճելով:

ՎԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ

Ոչ թե մեռնելուց է պետք վախենալ, այլ փուչ ապրելուց:

ԲԵՐՏՈԼԴ ԲՐԵԽՏ

Ապրիր մարդկանց հետ այնպես, որ քո բարեկամները չարականներ չդառնան, իսկ չարականները՝ բարեկամներ:

ՊՅՈՒԹԱԳՈՐԱՍ

Միակ զգացումը, որը տղամարդը հեշտությամբ խոստովանում է կնոջը, դա քաղցն է:

Ա.ՎԱՐԴԱՆՅԱՆ

«Վրաստանի» ընթերցող

Ախալքալաքի

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

34 ՏԱՐԻ՝ ԱՎԵՐԻՉ ԵՐԿՐԱՇԱՐԺԻՑ ՀԵՏՈ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ավերիչ երկրաշարժի հետեւանքով ավերվեց Հայաստանի ամբողջ բնակֆոնդի 17 տոկոսը, դադարեց գործել 100-ից ավելի արդյունաբերական ձեռնարկություն, մեծ վնաս հասավ նաեւ ճարտարապետական, պատմական, արվեստի հուշարձաններին:

Հայաստանին օգնելու համար առաջինը հասան շինարարական միավորումները Թբիլիսիից: Դեկտեմբերի 10-ին Հայաստան մեկնեցին մեքենայացված գումարտակներ ու Վրաստանի տարբեր անկյուններից բազմաթիվ կամավորներ: Արդեն, դեկտեմբերի 12-ից փրկարարական աշխատանքներին ներգրավվեցին Խորհրդային Միության բոլոր հանրապետությունները: Հայաստանի օգնության գործին ներգրավվեց նաեւ մոտ 113 երկիր, 7 միջազգային կազմակերպություն: Օգնության ձեռք մեկնողների թվում էին ԱՄՆ-ը, Բելգիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան, Նորվեգիան, Ֆրանսիան, Շվեյցարիան եւ այլն:

Դեկտեմբերի 7-ին, Ն.U.O.S.S. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եւ Սուրբ Վարդան մատուռ-մկրտարանում, կատարվել է հոգեհանգիստ՝ ի հիշատակ 1988 թվականի դեկտեմբերի 7-ի երկրաշարժի անմեղ զոհերի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ 7 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԿԱՆԽԱՏԵՍՄԱՄԲ ԸՆԴՈՒՆԵՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Դեկտեմբերի 8-ին Հայաստանի 2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագիծը ստացավ Ազգային ժողովի հավանությունը: Նախագիծն ընդունվեց դեկտեմբերի 8-ին, քվեարկությամբ՝ ստանալով 66 կողմ, 28 դեմ ձայներ:



2023 թվականի պետական բյուջեի ծախսերը կազմելու են 2 տրլն 591 մլրդ դրամ, իսկ եկամուտները՝ 2 տրլն 302 մլրդ դրամ: Հարկային եկամուտները սահմանված են 2 տրլն 203.7 մլրդ դրամ: Դեֆիցիտը կկազմի 289 մլրդ դրամ:

Պետբյուջեի նախագծի հիմքում դրված է 7 տոկոս տնտեսական աճի կանխատեսում:

Նախատեսվում է, որ կառավարության պարտքը, դրամային արտահայտությամբ, 2023 թվականի ավարտին կկազմի 4 տրլն 645 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 49.8 տոկոսը: Այս ցուցանիշի հաշվարկի հիմքում ընկած է ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 436 փոխարժեքը:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ ՎԵՑ ԱՆԴԱՄ ՀՐԱԺԱՐՎԵՑԻՆ ՎԵՐՑՆԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏՆԵՐ

Հայաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պատգամավորական մանդատներ տրամադրեց Միեր Սահակյանին, Արփինե Վարդանյանին, Արման Ղազարյանին ու Իրինա Գասպարյանին («Հայաստան» խմբակցություն), «Հայաստան» դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի 6 թեկնածուներ ինքնաբացարկի դիմում էին ներկայացրել՝ այսպիսով հրաժարվելով մանդատներից:

ԿԸՀ-ը դեկտեմբերի 8-ի նիստում նախ՝ ուժը կորցրած ճանաչեց «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորների թեկնածուներ Ռիմա Ղազարյանի, Ռուբեն Մելքոնյանի, Ռոբերտ Հայրապետյանի, Մարիա Պետրոսյանի, Սայաթ Շիրինյանի, Դավիթ Սահակյանցի գրանցումը՝ նրանց ինքնաբացարկի դիմումների հիման վրա:

Ապա հիմք ընդունելով Աժ նախագահի՝ «Հայաստան» խմբակցության մի քանի պատգամավորների լիազորությունները դադարած համարելու արձանագրությունները՝ ԿԸՀ-ը նրանց մանդատները տրամադրեց «Հայաստան» կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի առաջին մասի հերթական հաջորդ թեկնածուներին: Այսպիսով, խորհրդարանում Արամ Վարդեւանյանին կփոխարինի Միեր Սահակյանը: Վահե Հակոբյանի մանդատը տրամադրվեց Արփինե Վարդանյանին, Հռիփսիմե Ստամբուլյանի մանդատը՝ Արման Ղազարյանին, Ելենա Կիրակոսյանի մանդատը՝ Իրինա Գասպարյանին:

Ավելի վաղ պատգամավորական մանդատից հրաժարվելու դիմում էին ներկայացրել Արամ Վարդեւանյանը, Վահե Հակոբյանը, Հռիփսիմե Ստամբուլյանն ու Ելենա Կիրակոսյանը:

ՄԻՔԱՅԵԼ ԳՈՒՐՋՅԱՆԻ ՖԻԼՄԸ՝ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՕՏԱՐԱԼԵՋՈՒ ՖԻԼՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆՈՒՄ



Ռեժիսոր Միքայել Գուրջյանի «Ամերիկացի» կինոնկարը, Իտալիայի SALERNO միջազգային կինոփառատոնի պաշտոնական մրցութային ծրագրում, ճանաչվել է որպես լավագույն օտարալեզու ֆիլմ (Winner Best Film):

Պետական աջակցությամբ նկարահանված կինոնկարը պատմում է ցեղասպանությունից հրաշքով ողջ մնացած եւ Միացյալ Նահանգներ գաղթած հայ երիտասարդի՝ Չարլիի մասին, որի ընտանիքն այդ ոճրագործության զոհ է դարձել: Պատմությունն սկսվում է 1947 թվականին, երբ Չարլին վերադառնում է Հայաստան եւ բախվում խորհրդային կոմունիզմի դաժան իրականությանը:

Ռեժիսոր եւ սցենարիստ՝ Միքայել Գուրջյան, օպերատոր՝ Ղասեմ Էբրահիմյան, դերասաններ՝ Հովիկ Քէուչկերեան, Միխայիլ Տրուխին, Նելլի Ուվարովա, Ժան-Պիեր Նշանյան, պրոդյուսերներ՝ Արման Նշանյան, Սոլ Տրիոն, Պատրիկ Մալխասյան, Անի Որսկանյան, արտադրող ընկերություն People Of Ar Productions:

ԲԵՅՐՈՒԹ, ԴՈՒԲԱՅ, ԹԵԼ ԱՎԻՎ ԱՎԻԱՏՈՄՍԵՐԸ՝ 89 ԵՎՐՈՅՈՎ

Flyone Armenia ավիաընկերությունը, գործուեության մեկամյակի եւ Ամանորի կապակցությամբ, հայտարարում է «Բայահայտիր աշխարհը» ակցիայի մեկնարկի մասին:

Ակցիայի շրջանակներում բոլոր յանկարողները կկարողանան ձեռք բերել տոմսեր առավել մատչելի գներով: Այս տարի Flyone Armenia ընկերության կողմից ակցիային ներկայացվում են դեպի Մերձավոր Արեւելքի քաղաքներ իրականացվելիք չվերթերը: Դեկտեմբերի 5-11-ը, յուրաքանչյուր ոք կկարողանա ձեռք բերել դեպի Բեյրութ, Դուբայ, Թել Ավիվ եւ հետադարձ ավիատոմսերը աննախադեպ 89 եվրոյին համարժեք գնով: Տոմսերի քանակը սահմանափակ է:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՁԱՓՐ ԳՆԱՀԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ Է

Ընթացիկ տարվա նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, Հայաստանի սպառողական շուկայում գնաճը կազմել է 8,8 տոկոս, իսկ նախորդ ամսվա համեմատ՝ 1,1 տոկոս, սպառողական գինը ավելացել է 9,5 տոկոսով: Նշենք, որ, դիտարկվող ժամանակահատվածում, ԵԱՏՄ անդամ երկրներում Ռուսաստանում սպառողական գներն ավելացել են 12,6, Բելառուսում՝ 15,2, Ղրղզստանում՝ 15,4, Ղազախստանում՝ 18,8 տոկոսով:

Տարածաշրջանի երկրներում, մասնավորապես՝ Թուրքիայում գրանցվել է 85,4 տոկոս գնաճ, Վրաստանում՝ 10,6, Ադրբեջանում՝ 15,6 տոկոս:

Եվրասիական զարգացման բանկը ներկայացրել էր, 2023թ. համար, ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների վերաբերյալ զեկույցը, համաձայն որի՝ ակնկալվում է, որ 2023թ. տարեվերջին, ԵԱՏՄ երկրների շարքում, ամենացածր գնաճը կարձանագրվի Հայաստանում՝ 4,6 տոկոսի սահմաններում:

COVID-19. ՄԵԿ ՇԱԲԱԹՈՒՄ ՎԱՎԵՐԱՅՎԵԼ Է ՎԱՐԱԿՄԱՆ 91 ԴԵՊՔ

Հայաստանի առողջապահության նախարարության տեղեկատվությամբ՝ Հայաստանում, նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 4-ն ընկած ժամանակահատվածում, կատարվել է 2386 թեստավորում, գրանցվել է կորոնավիրուսային հիվանդության 91 դեպք: Նշված ժամանակահատվածում գրանցվել է մահվան 2 դեպք:

Վերջին 7 օրվա ընթացքում առողջացածների թիվը կազմում է 113, ներկայում բուժում է ստանում 283 քաղաքացի:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, համավարակի ժամանակահատվածում, կատարվել է 3 մլն 237 հազար 561 թեստավորում, հաստատվել է կորոնավիրուսային հիվանդության 445 հազար 828 դեպք: Առողջացածների ընդհանուր թիվը կազմում է 434 հազար 979, մահացել է 8 հազար 712 քաղաքացի:

ՔԻՄ ՔԱՐԴԱՇՅԱՆԸ, ՇԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀԱՅՏՆԻՆԵՐ ՀՈՐԴՈՐԵԼ ԵՆ ԳՆԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԶԱՐԴԵՐ ԵՎ ԱՋԱԿՑԵԼ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆԸ

Աշխարհահռչակ ամերիկահայ հեռուստաաստղ Քիմ Քարդաշյանը, հանրահայտ փոփ երգչուհի Շերը (Շերլին Սարգսյան), ամերիկաբնակ պրոդյուսեր էրիկ էսրայելյանը համացանցում դիմում են իրենց հետեւորդներին՝ հորդորելով գնել հայկական գրություններով զարդերն ու այդպես աջակցել՝ աշխարհի հինավուրց տաճարներից, էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման աշխատանքներին:



Քիմ Քարդաշյանը «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում հոլովակ է զետեղել, որում նշում է, որ միշտ ճանապարհներ է փնտրում Հայաստանին աջակցելու համար եւ իր հետեւորդներին է ներկայացնում Metal Alchemist ապրանքանիշի «Հայր մեր», «Արարատ լեռ», «Սեր» եւ այլ գրություններով ապարանջաններն ու այլ զարդերը եւ ասում, որ աշխարհում շատ պատմական վայրեր կան, սակայն ամենահինավուրց տաճարները Հայաստանում են:

Նա հիշեցնում է, որ այդ տաճարներից մեկում տարիներ առաջ կնքել է իր երեխաներին: Քարդաշյանը տեղեկացնում է, որ տաճարը վերանորոգման փուլում է ու ընդգծում, որ, ապարանջանների վաճառքից ստացված եկամտի հարյուր տոկոսը, փոխանցվելու է տաճարի վերանորոգման աշխատանքներին:

Շերը «Ինստագրամ»-ի իր պաշտոնական էջում մի լուսանկար է հրապարակել, որի վրա գրված է, որ իր հայկական արմատներն իր ինքնության հսկայական մասն են, եւ ինքը հպարտ է էջմիածնի Մայր տաճարի վերանորոգմանն աջակցելու համար կազմակերպված նախաձեռնության մի մասը լինել:

Հայոց ցեղասպանության մասին հոլիվուդյան «Շոստումը» ֆիլմի պրոդյուսեր էրիկ էսրայելյանը նույնպես միացել է արշավին: Նա «Ինստագրամ»-ի իր պաշտոնական էջում գրել է, որ շարունակելու է աջակցել Հայաստանին եւ Արցախին:

Սուրբ էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման աշխատանքները սկսվել են 2017 թվականին եւ դեռ շարունակվում են:

ՀՅՈՒՐԱԽԱՂ

ԹԱԹՈՒԼ ԱԼԹՈՒՆՅԱՆԻ ՀԱՄՈՒՅԹԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Դեկտեմբերի 2-3-ը Հայաստանի Թաթուլ Ալթունյանի անվան երգի-պարի պետական վաստակավոր համույթը, իր 85-րդ հոբելյանի առիթով, Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ, համերգային հյուրախաղեր ունեցավ Թբիլիսիում:



Դեկտեմբերի 2-ին համույթը ստեղծագործական հանդիպում ունեցավ Վիրահայոց թեմի «Հայարտուն» կրթամշակութային եւ երիտասարդության կենտրոնում, իսկ դեկտեմբերի 3-ին, Թբիլիսիի Դիդոմիի Վախթանգ Սալարիձեի անվան համերգային դահլիճում ներկայացավ համերգային ծրագրով:

Համերգին ողջույնի խոսքով հանդես եկավ Վրաստանում Հայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանը, որը շնորհավորեց վաստակավոր անսամբլին՝ 85-րդ տարեդարձի առիթով եւ մաղթեց շարունակական ու բեղմնավոր գործունեություն:

ԹԵԺ ԳԻՇ

ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

*Շտապ բժշկական օգնություն - **112***
*Պարեկային ոստիկանություն - **112***
*Հրշեջ-փրկարար ծառայություն - **112***
*Պահակային ոստիկանություն - **125***
*Գլխավոր տեսչություն - **126***
*Տեղեկատու բյուրո - **118 08***
*Քաղաքապետարանի թեժ գիծ - **272-22-22***
*Առողջապահության նախարարության թեժ գիծ - **15-05***
*Ժողովրդական պաշտպան - **299-58-98, 292-24-79***
*Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - **14-81***
*«Թբիլիսի էներջի»-ի տեղեկատվական ծառայություն - **114, 240-40-04***
*«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն - **227-50-40***
*ԹԵԼՄԻԿՈ-ի թեժ գիծ - **16 700, (+995 32) 5 000 777***
*Ջրամատակարարման թեժ գիծ - **293-11-11***
*Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - **(593) 50-42-52***
*Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - **231-03-41, 231-04-21***
*Երկաթուղային կայարան - **1331, 2199010***
*Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - **(599) 74-73-73***

ԵՐԳԻ ՓԱՌԱՏՈՆ

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-11-ԻՆ՝ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ 2022»-Ը ԵՐԵՎԱՆՈՒՄ



«Մանկական Եվրատեսիլ» երգի հեղինակավոր մրցույթի տասնվեց մասնակիցները՝ դեկտեմբերի 5-ին, Երեւանի սրտում՝ Հանրապետության հրապարակում, ազդարարեցին մրցույթի պաշտոնական բացումը: «Մանկական Եվրատեսիլ 2022»-ի խորհրդանիշը հայկական հոլմ է, իսկ կարգախոսը՝ «Պտտի'ր հրաշքը»:

Հայաստանի ազգային պատկերասրահում կայացավ Եվրատեսիլի 20-րդ մրցույթի վիճակահանությունը, ըստ որի՝ դեկտեմբերի 11-ին Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք մրցույթին, առաջինը ելույթ կունենա Նիդերլանդների պատվիրակը, իսկ վերջինը՝ Ուկրաինայի մասնակիցը: Մյուս մասնակից երկրները՝ Վրաստանը, Հայաստանը, Ալբանիան, Իռլանդիան, Իտալիան, Իսպանիան, Լեհաստանը, Հյուսիսային Մակեդոնիան, Ղազախստանը, Մալթան, Պորտուգալիան, Սերբիան, Միացյալ Թագավորությունը, Ֆրանսիան հանդես կգան ըստ այբբենական կարգի:

Երգի փառատոնին Վրաստանը կներկայացնի Մարիամ Վիգվավան՝ «Ես հավատում եմ» երգով, իսկ Հայաստանը՝ Նարեն՝ «Պարիր» երգով:

Հիշեցնենք, որ 2021 թվականի դեկտեմբերին, Փարիզում անցկացված «Մանկական Եվրատեսիլ 2021»-ում, Մալենայի՝ «Քամք-քամի» երգով հաղթանակի շնորհիվ մրցույթը 2022-ին անցկացվում է Հայաստանում:

Ավելացնենք, որ Մալենայի հաղթական ելույթը Եվրատեսիլում Հայաստանի համար առաջինը չէր: 2010 թվականին Մինսկում նման հաջողության էր հասել Հայաստանը ներկայացնող Վլադիմիր Արզումանյանը՝ «Մայրիկ» երգով:

ՖՈՒՏԲՈԼ


ԿԱՏԱՐ 2022. ՄՐՑԱՇԱՐԸ ԹԵՎԱԿՈՒԽԵՑ ՎՃՌՈՐՈՇ ՓՈՒԼ

Կատարի մայրաքաղաք Դոհայում մեկնարկած ֆուտբոլի աշխարհի 2022 թվականի առաջնությունը թեւակոխեց վճռորոշ փուլ:

Անակնկալներով հարուստ խմբային մրցաշարին (բավական է նշել, որ խմբային արգելագիծը չհաղթահարեցին այնպիսի հեղինակավոր հավաքականներ, ինչպիսիք էին Գերմանիայի, Բելգիայի, Դանիայի հավաքականները) հաջորդեց նույնպես անակնկալներով հարուստ մեկ ութերորդ եզրափակիչը: Այդ փուլում Նիդերլանդները՝ 3:1 հաշվով պարտության մատնեցին ԱՄՆ-ի թիմին, արգենտինացիները՝ 2:1 հաշվով առավելության հասան Ավստրալիայի հավաքականի նկատմամբ, Ֆրանսիան՝ 3:1 հաշվով պարտության մատնեց լեհերին, 3:0 հաշվով անգլիացիները հաղթեցին եւ մրցաշարից հեռացրին սենեգալցիներին, Բրազիլիան՝ 4:1 հաշվով պարտության մատնեց Հարավային Կորեայի թիմին, Մարրոկոյի հավաքականը 11-մետրանոց հարվածներով 3:0 հաշվով մրցաշարից դուրս մղեց իսպանացիներին (խաղի հիմնական ժամանակը ավարտվեց ոչ ոքի՝ 0:0), աշխարհի բրոնզե մեդալակիրներ խորվաթները նույպես 11 մետրանոց հարվածներով 3:1 հաշվով (հիմնական ժամանակը՝ 1:1) պարտության մատնեցին ճապոնացիներին, իսկ Պորտուգալիան՝ 6:1 հաշվով մրցաշարից դուրս մղեց Շվեյցարիայի թիմը:

Առաջնության քառորդ եզրափակչում կհանդիպեն Խորվաթիա-Բրազիլիա, Նիդերլանդներ-Արգենտինա, Մարրոկո-Պորտուգալիա եւ Անգլիա-Ֆրանսիա հավաքականները:

Հիշեցնենք, որ առաջնության քառորդ եզրափակչի հանդիպումները կմեկնարկեն դեկտեմբերի 9-ին, կիսաերզափակիչը՝ դեկտեմբերի 13-14-ին, երրորդ տեղի համար՝ դեկտեմբերի 17-ին, իսկ եզրափակիչ հանդիպումը կկայանա դեկտեմբերի 18-ին:



ԽԱՉԲԱՌ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 1.Ղազարոս Աղայանի հեքիաթի հերոս: 5.Մեր Մկրտչյանի մարմնավորած դերերից: 10.Արփի, արեւ, արեգակ: 11.Շատ արագ: 13.Նար-Դոսի «Ես եւ ...» ստեղծագործությունը: 14.Մեծ Բրիտանիայի մաս: 15.Տպագրել, թղթին հանձնել: 16.Էմալը՝ հայեցի: 18.Անձնական դերաւնուն: 20.Բագրատունիների մայրաքաղաքը: 21.Մեքենայի մաս: 24.Յոթերորդ ձայնանիշը: 27.Սիրիայի նախագահը: 29.«..., գլորիկ, ա՛յ լորիկ» (ժող.երգ): 32.Նոտաներից մեկը: 33.Թվականի վերջավորություն: 35.«Վերքը» բարբառային: 36.Խ.Աբովյանի գրական հերոս: 37.«... դուետ ակադեմիա» գրական-երաժշտական խումբ: 39.Ներկա, գոյություն ունեցող: 41.Կրթություն չունեցող, չսովորած: 42.Փաստաթղթերը մի տեղից մյուսը տանողը: 44.Պատի կողակիցը, «ընկերուհին»: 45.Արյան բաղադրիչ: 46.Քաղաք ՌԴ-ում: 47.Աշուղ Ջիվանու երգերից՝ «... է, ...»: 49.«Մայրիկ» ֆիլմի ռեժիսոր Վեռնոյը: 50.Ե'վ պատասխան, ե'ւ թիվ: 52.Ղեկավար, վարիչ: 55.Մայրը Ավ.Իսահակյանի լեզվում: 56.Ստորադասական շաղկապ: 57.Աֆրիկյան որոշ երկրների դրամական միավորը: 59.Գրողի ստեղծագործություն: 60.Ե'վ Երվանդը, ե'ւ Հրաչյան:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 2.Նոսովի ստեղծագործություններից «Անգետիկի ...ները»: 3.Քարի տեսակ: 4.Նորվեգացի բեւեռախույզ, գիտնական: 5.Այն քաղաքի համալսարանը, որտեղ ուսանել է արեւմտահայ մեծ բանաստեղծ Դանիել Վարուժանը: 6.Հովսեփ Վարդանյանի հայատառ-թուրքաբառ վեպը: 7.Հին Հունաստանի դիցուհի: 8.Խոջիվանքում հանգչող մեծ վիպասանը: 9.Գրողի ստեղծագործության տեսակ: 12.Աշխարհի ամենաերկար գետը: 17.Ծաղկի տեսակ: 19.Օտարալեզու հայ հանրահայտ գրող: 22.Գինու աման: 23.Հովհ.Թումանյանի ծննդավայր գյուղը: 25.Հայ մեծ գրող: 26.Վրաց հայտնի դերասան: 28.Ստեղծող, արարող: 30.Դպիր, ուսուցչապետ: 31.Դերձակի գործը: 34.Բառի վերջավորություն: 36.Պատմական Հայաստանի նահանգներից: 37.Ընտանի կենդանի: 38.Երեւանի բազմաթիվ քանդակների հեղինակ (անունը): 40.Աշխարհի ամենաչոր անապատը: 43.Գեղեցիկ, սլացիկ ծառ: 48.Ժամանակի միավոր: 51.Հայոց աստվածուհի: 53.Ղ.Աղայանի ստեղծագործություններից «... Անգեղ»: 54.Ամերիկահայ երգչուհի Շերիլին Սարգսյանի կեղծանունը: 57.Պարույր Սեւակի բանաստեղծություններից: 58. Լակոնիկ, բացասական պատասխան:

Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 7.Մեծատառ: 9.Ուլունք: 10.Իորի: 11.Հոփկինս: 13.Նպաստ: 16.Վեա: 17.Ահն: 19.Պլոմբ: 22.Քլինք: 24.Հռետոր: 25.Պահք: 27.Բուֆալո: 29.Անաբաս: 32.Բանգկոկ: 33.Քառակի: 35.Աբակ: 37.Խոկ: 39.Արինա: 40.Չթյա: 43.Կեղ: 44.Ճչոց: 47.Վաչ: 49.Ակակի: 50.Ալիա: 53.Անոտ: 54.Սեռ: 55.Ալամ: 57.Կուտ: 58.Ուտրեխտ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Ձենով: 2.Դաբկա: 3.Ֆաինա: 4.Քուին: 5.Քուրա: 6.Սքոտ: 8.Ռոսիա: 12.Փերի: 14.Պելե: 15.Սումո: 18.Գթալ: 19.Պռունգ: 20.Ոտաբոբիկ: 21.Բրաս: 23.Նպատակ: 26.Հոբի: 28.Ուրախ: 29.Անծ: 30.Ակար: 31.Ականել: 34.Ռոկոկո: 36.Կաղ: 38.Օյա: 41.Թվիստ: 42.Աչառու: 45.Չանա: 46.Ցատկ: 48.Տիար: 51.Ալե: 52.Ամտ: 56.Ախ:

Գլխավոր խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ
Գլխ. խմբագրի տեղակալ՝ ՅՈՒՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ
Համարի պատասխանատու՝ ԳԱՅԱՆԵ ԲՈՍՏԱՆՋՅԱՆ
Համակարգչային ձեւավորումը՝ ՏԻԳՐԱՆ ՍԻՐԱԴԵՂՅԱՆ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ՝ ՄՅՈՒՆԻԽԻ 0105, Գ.ԱՏՈՆԵԼԻՈՒ ՓՈՂՈՑ 5.
Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105 Գ.Աթոնելի փ. 5
ԹԵԼ. Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge E-mail: vrastan.press@gmail.com
Գրանցման վկայական № 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

«ՎՐԱՍՏԱՆ»
ՄՅՈՒՆԻԽ, ՍԱՓԱՐՄՅԵԼՈՒ
"VRASTAN"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445